**«Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» ՀԿ-ի**
**EduArmenia կրթական նախաձեռնություն**

# Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց 2023

## Հետազոտական աշխատանք

**<u>Թեմա՝</u>Ի՞նչպես մոտիվացնել սովորողներին պատմության դասաժամերին:**

**Հետազոտող ուսուցիչ՝ Անուշ Աբրահամյան**
(Գավառ քաղաքի Գ. Մնացականյանի անվան համար 7 միջնակարգ դպրոց)

**ԳԱՎԱՌ 2023թ.**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
2. ՆՊԱՏԱԿԸ և ԽՆԴԻՐՆԵՐԸ
3. ԳԼՈՒԽ 1. Ի՞ՆՉ Է ՄՈՏԻՎԱՑԻԱՆ
4. ԳԼՈՒԽ 2. Ի՞ՆՉՊԵՍ ԵՄ ԵՍ ՄՈՏԻՎԱՑՆՈՒՄ ԻՄ ԴԱՍԱԺԱՄԵՐԻՆ:
5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
6. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

« Պատմությունը մի վարդապետարան է, որի մեջ ապագա սերունդը կրթվում է՝ զգուշանալով յուր նախնիների սխալներից և հետևելով նրանց լավ գործերի օրինակին»

ՐԱՖՖԻ

« Պատմությունը կյանքի մեծ դաստիարակ է, նա ոչինչ չի սովորեցնում, այլ միայն պատժում է դասերը չիմանալու համար: Պատմական հիշողությունից, ավանդույթից ու մշակույթից դուրս չկա անհատ: Պատմական հիշողությունը ձևավորում է մարդու աշխարհայացքի հոգևոր ամբողջականությունը:»

Վ.Օ.ԿԼՅՈՒՇԵՎՍԿԻ

« Դպրոցում չի կարելի ամեն ինչ սովորել, պետք է սովորեցնել սովորել:»

Վ.ՄԵՅԵՐԽՈԼԴ

« Սովորական ուսուցիչը պատմում է, լավ ուսուցիչը՝ բացատրում, բարձրակարգ ուսուցիչը՝ ցույց տալիս, հանճարեղ ուսուցիչը՝ ոգեշնչում:»

ՈՒԻԼՅԱՄ ՈՒՈՐԴ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Թեմայի արդիականությունը:** Ժամանակակից կրթության մեջ գիտելիքների որակի ապահովումը դառնում է հիմնական խնդիր, որը թելադրված է կրթված, բարոյական, հայրենասեր և հայրենատեր շրջանավարտներ պատրաստելու անհրաժեշտությամբ, որոնք պատրաստ են ինքնուրույն որոշումներ կայացնել՝ ընտրության անհրաժեշտության դեպքում, ունակ են համագործակցելու, բնութագրվում են շարժունակությամբ, պատրաստ են կառուցողական փոխգործակցության, կարող են ինքնուրույն և արագ աշխատել անընդհատ թարմացվող տեղեկատվության հետ: Գիտելիքների որակի ապահովմանն խնդիրն այն է, որ այն ապահովի ուսուցման գործընթացում անհրաժեշտ պայմաններ, որպեսզի ուսումնական բովանդակությունը դառնա սովորողի ակտիվ գործողությունների առարկա, գիտելիքների ձուլումը լինի ամուր և գիտակցված: Միևնույն ժամանակ կազմակերպել ոչ թե էպիզոդիկ գործողություններ, այլ կրթական գործողությունների համակարգ՝ սովորողների համար ստեղծել անհրաժեշտ պայմաններ, օգտագործել անհրաժեշտ ՏՀՏ միջոցներ, նոր հնարներ ու մեթոդներ, որպեսզի սովորողի մեջ հետաքրքրություն և սեր առաջանա առարկայի նկատմամբ: Այս գործում ամենաէականը ուսուցչի գործոնն է: Հայտնի միտք կա,եթե սովորողը սիրի ուսուցչին՝ առարկան կսովորի: Բայց դա 100 % չի աշխատում: Հաճախ սովորողը հարգում և սիրում է ուսուցչին, բայց անտարբեր է նրա դասավանդած առարկայի նկատմամբ: Ուստի ուսուցչի ճիշտ, վարպետորեն կատարած ոսկերչական աշխատանքից է կախված սովորողի մեջ իր առարկայի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելը: Առաջին հերթին սովորողը պետք է հասկանա, թե ինչի համար պետք է սովորի պատմություն առարկան, ի՞նչու է անհրաժեշտ սովորել հայոց պատմություն առարկան: Երբ սովորողը ստանա այս հարցերի պատասխանները, նա կձգտի սովորել այս առարկան:

# ՆՊԱՏԱԿԸ և ԽՆԴԻՐՆԵՐԸ

Աճող սերնդի մեջ արժեքային համակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար կարևոր և անփոխարինելի նշանակություն ունի պատմություն առարկան:

Ճիշտ արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է պատմություն առարկայի դերը, ուստի պատմություն առարկա դասավանդողի ուսերին դրված է մեծ բեռ՝ մոտիվացնել սովորողին սիրել, արժևորել, գնահատել պատմություն առարկան, նրա դերը գերագնահատել այս հարափոփոխ և մեր ժողովրդի համար վտանգավոր ու օրհասական ժամանակաշրջանում:

Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների, կերպարների միջոցով, սովորողների մոտ ձևավորվում են « հերոսների» ոչ ճիշտ օրինակներ: Ուստի պատմության ուսուցչի նպատակը պետք է լինի պատմական դրական հերոսի կերպարներով ոգևորել սովորողին, որ նա իր համար, որպես օրինակ ոչ թե քրեական ենթամշակույթին հարող մեկը լինի, այլ մեր ազգային ազատագրական որևէ հերոս՝ Մոնթե, Նժդեհ, Անդրանիկ, Կարո Քահքեջյան և այլն:

Աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:

Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ճիշտ ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ սոովորողը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն: Զարմանակի օրինաչափությամբ յուրաքանչյուր փոփոխության դարաշրջան հարց է դնում կրթության բովանդակության

թարմացման՝ որպես համակարգային ճգնաժամի դրսևորում հենց այդ կրթության, որը դադարել է համապատասխանել ժամանակակից կարիքներին: Դպրոցը հասարակության հավերժական շարժիչն է: Եթե դպրոցում ամեն ինչ լավ է, լավ է նաև հասարակության մեջ: Ուստի հաշվի առնելով ներկայացվող պահանջները հասարակության մեջ ժամանակակից մարդուց, ուսուցիչը ավանդական հարցերի հետ մեկտեղ « Ի՞նչու և ինչպե՞ս սովորեցնե լ», պետք է ունենա պատասխան՝ « Ինչպես արդյունավետ սովորեցնել »:

Այսօր դպրոցն ու հասարակությունը կանգնած են խնդրի առաջ՝ դեմոտիվացիայի՝ սովորողների մոտ կրթության նկատմամբ ցանկությունների և դրդապատճառների բացակայությունը, անտարբերությունը ուսման նկատմամբ:

Հետևաբար, իմ խնդիրը հետազոտական աշխատանքում հնչում է՝ բացահայտել դեպի սովորողը անհատական մոտիվացիայի ուղիները, ճանաչողական գործընթացների զարգացումը: Սա թույլ կտա սովորողին դեմքով շրջվել դեպի ուսումնական գործունեությունը:

Պատմությունը և հասարակագիտությունը ավելին են, քան պարզապես դասընթացներ: Դրանք ունեն սոցիալական նշանակություն և դրանց ուսումնասիրությունը կնպաստի սովորողների սոցիալական գործունեությանը, կարթնացնի սովորողի անհատական գիտակցությունը, կսահմանի քաղաքացիական դիրքորոշումը, քննադատական մտածողությանը կնպաստի:

Վերը նշվածով պայմանավորված այս հետազոտական աշխատանքը արդիական է: Ուսումնասիրության օբյեկտն է ուսումնական գործունեություն ծավալող սովորողները, որոնց պետք է մոտիվացնել: Ուսումնասիրության առարկան է պատմության և հասարակագիտության դասերին սովորողների մոտիվացիայի մակարդկաի բարձրացման ուղիներն ու մեթոդները:

Ուսումնասիրության նպատակը՝ տեսականորեն հիմնավորել և պրակտիկ գործունեությամբ ուսումնասիրել այդ ուղիներն ու մեթոդները,որը կտանի մոտիվացիայի մակարդակի բարձրացմանը: Այս խնդրի ուսումնասիրությունը չի արվել առանց հոգեբանական և մանկավարժական մեթոդական գրականության:

Սովորողների կրթական գործունեության դրդապատճառը ( մոտիվացիան ) մեր ժամանակի կարևորագույն խնդիրներից մեկն է:

# ԳԼՈՒԽ 1. Ի՞ՆՉ Է ՄՈՏԻՎԱՑԻԱՆ, Ի՞ՆՉՊԵՍ ՄՈՏԻՎԱՑՆԵԼ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ

**Մոտիվացիա**-( ֆր.-motif-դրդապատճառ) - գործողության մղում:

**Մոտիվացիա**- (լատ.- movere)- գործողության դրդապատճառ, հոգեֆիզիոլոգիական պլանի դինամիկ գործընթաց, որը ղեկավարում է մարդու

վարքը, որոշում է նրա կողմնորոշումը, կազմակերպվածությունը, գործունեությունը և կայունությունը:

Մոտիվացիան կարող է սահմանվել որպես հոգեբանական պատճառների ամբողջություն:

Առաջին անգամ « մոտիվացիա » տերմինը օգտագործել է Ա.Շոպենհաուերը « Բավարար պատճառի 4 սկզբունքները » հոդվածում:

## ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ՓՈՒԼԵՐԸ

Մոտիվացիան կարող է լինել ճիշտ և սխալ: Սովորողի մոտ չձևավորված դրական կայուն մոտիվացիան ուսումնական գործընթացի ժամանակ կարող է պատճառ դառնալ նրա թույլ առաջադիմությանը: Աշակերտների շրջանում բացի զուտ ճանաչողական կարիքներից կրթական հետաքրքրությունների դրդապատճառները կարող են գործել դժվարություններից խուսափեելը, ծնողի կողմից պատժվելու վախը, ուսուցչի կողմից գովասանք վաստակելու ցանկությունը, միայն գնահատականի կամ միայն ԲՈՒՀ ընդունվելու համար սովորելու դրդապատճառները: Սա սխալ մոտիվացիան է:

Շատ կարևոր է ճիշտ մոտիվացիան: Այն սովորողի մոտ ձևավորում է անհրաժեշտ որակներ, դրական դինամիկա, բարձրացնում է ճանաչողական գործունեությունը, գոտելիքների որակը: Մեծ նշանակություն ունի սովորողի մոտ ձևավորել ինքնաճանաչողությունը, ինքնակազմակերպումը, դեպի նախանշված նպատակին հասնելու ձգտումը: Մոտիվացիայի ձևավորման երաշխիքն է սովորողների ճանաչողական գործունեությունը, անհրաժեշտ հաջող գործունեություն՝ հետագա կյանքի պլանավորման համար:

Լ.Ս.Վիգոտսկին առանձնացնում է ուսուցման արդյունքների հետ կապված մոտիվացիայի մի քանի տեսակներ:

- Մոտիվացիա, որը պայմանականորեն կարելի է անվանել բացասական: Դա պայմանավորված է որոշակի անհարմարությունների և խնդիրների գիտակցմամբ, որոնք կարող են առաջանալ, եթե նա չսովորի ( նախատիքներ ծնողների, ուսուցիչների, դասընկերների կողմից) : Նման մոտիվացիան չի հանգեցնում հաջող արդյունքների:
- Դրական բնույթ ունեցող մոտիվացիօան որոշվում է անհատի համմար ծանրակշիռ սոցիալական ձգտումներով ( երկրի, սիրելիների նկատմամբ քաղաքացիական պարտքի զգացում):

Սովորողների մոտ կա դրական մոտիվացիայի նվազման խնդիր, որը մինչև օրս մնում է արդիական: Մոտիվացիայի նվազումը առավել հաճախ նկատվում է դեռահաս երեխաների մոտ:

Դեռահասների մոտ նկատվում է « հորմոնալ պայթյուն » և ապագայի զգացողությունը հստակ ձևավորված չէ: 6-7-րդ դասարանի աղջիկների մոտ

տարիքային զգայունությունը նվազում է ուսումնական գործունեության նկատմամբ՝ կապված սեռական հասունացման ինտեսիվ կենսաբանական գործընթացի հետ: Եվ նրանք իրենց մոտ մոտիվացիայի նվազումը բացատրում են կարողությունների և ջանքերի բացակայությամբ, տրված առաջադրանքի դժվարությամբ, բախտի բացակայությամբ:

Ուսուցման մոտիվացիան որոշվում է մի շարք գործոններով՝ կրթական գործընթացի կազմակերպմամբ, ուսումնական հաստատության գործունեությամբ, սովորողի առանձնահատկություններով, տարիքը, սեռը, մտավոր զարգացումը, կարողությունները, խստապահանջությունը, նպաստում է հայտնի դժվարությունների հաղթահարմանը, համբերության և հաստատակամությա դրսևորմանը:

Ըստ Բ.Ի.Դոդոնովի՝ մոտիվացիան կրթական գործունեության կառուցվածքի ամենակարևոր բաղադրիչն է և անհատի համար մշակված ներքին մոտիվացիան, դրա ձևավորման հիմնական չափանիշն է: Այն կայանում է նրանում, որ երեխան « հաճույք է ստանում բուն գործունեությունից, անձի համար դրաա անմիջական արդյունքի նշանակությունից »:

Կրթական մոտիվացիայի 5 մակարդակ կա:

**Առաջին մակարդակը** դպրոցական մոտիվացիայի կրթական գործունեության բարձր մակարդակն է: Նման երեխաներն ունեն ճանաչողական շարժառիթ, ցանկություն՝ առավել հաջողությամբ կատարել բոլոր դպրոցական պահանջները, ունեն սեփական գիտելիքներ: Սովորողները հստակ հետևում են ուսուցչի բոլոր ցուցումներին, բարեխիղճ և պատասխանատու են, խիստ անհանգստանում են, եթե ստանում են անբավարար գնահատականներ:

**Երկրորդ մակարդակը** դպրոցական լավ մոտիվացիան է: Սովորողները հաջողությամբ հաղթահարում են ուսումնական գործունեության դժվարությունները: Սա մոտիվացիայի միջին մակարդակն է:

**Երրորդ մակարդակը** դրական վերաբերմունքն է դպրոցի նկատմամբ, բայց դպրոցը նման երեխաներին գրավում է միայն արտադպրոցական գործունեությամբ: Նման երեխաներն իրենց բավականաճափ ապահով են զգում դպրոցում, որպեսզի շփվեն ընկերների, ուսուցիչների հետ: Նրանք սիրում են կրենց աշակերտ զգալ, ունենալ գեղեցիկ պայուսակ, գրենական պիտույքներ,

առանձնանալ իրենց հագուկապով: Նման երեխաների ճանաչողական դրդապատճառները ձևավորվում են ավելի փոքր չափով և կրթական գործընթացը նրանց քիչ է գրավում:

**Չորրորդ մակարդակը**՝ ցածր դպրոցական մոտիվացիա: Այս երեխաները դժկամությամբ են հաճախում դպրոց, նախընտրում են բաց թողնել դասերը, դասերին հաճախ զբաղվում են կողմնակի գործերով՝ խաղերով, հեռախոսով: Լուրջ դժվարություններ են ունենում կրթական գործունեության մեջ: Դպրոցին, դպրոցական կարգին ու կանոնին դժվար են հարմարվում:

**Հինգերորդ մակարդակը**՝ բացասական վերաբերմունք դպրոցի նկատմամբ: Այս երեխաները չեն հաղթահարում կրթական գործունեությունը, խնդիրներ են ունենում դասընկերների հետ շփվելիս և ուսուցիչների հետ վատ հարաբերությունների մեջ են գտնվում: Դպրոցը հաճախ նրանց կողմից ընկալվումէ որպես թշնամական միջավայր, այնտեղ գտնվելը նրանց համար անտանելի է: Որոշ դեպքերում նման աշակերտները կարող են ագրեսիա ցուցաբերել, հրաժարվել առաջադրանքներ կատարելուց, հետևել որոշակի նորմերի ու կանոնների: Նման դպրոցականների մոտ նկատվում է նյարդային, հոգեկան խանգարումներ: Հետագա զարգացման և գործունեության գործընթացում շահերի ձևավորումը, որպես կանոն, չի դադարում: Տարիքի հետ մարդու մոտ նկատվում է նաև նոր հետաքրքրությունների ի հայտ գալը: Այնուամենայնիվ այս գործընթացը հիմնականում գիտակցված, կամ նույնիսկ պլանավորված է, քանի որ այդ հետաքրքրությունները հիմնականում կապված են մասնագիտական հմտությունների բարելավման, ընտանեկան հարաբերությունների զարգացման, ինչպես նաև այն նախասիրությունների հետ, որոնք այս կամ այն պատճառովչեն իրականացվել պատանեկության տարիներին:

Ավագ դպրոցական տարիքում անհրաժեշտություն է առաջանում բարելավել իրենց կրթական գործունեոիթյունը, ինչը դրսևորվում է ինքնակրթության ցանկությամբ դուրս գալով դպրոցական ուսումնական շրջանակից: Որպեսզի մոտիվացիան լինի դրական ավագ դպրոցի աշակերտների մոտ, մեծամասամբ դա կախված է ուսուցչի առանձնահատկություններից, առաջին հերթին աշակերտի նկատմամբ նրա վերաբերմունքից, ինչպես նաև դասավանդվող առարկայի առանձնահատկություններից:

Բացի աշխատանքի տարբեր ձևերից և մեթոդներից, որոնք ստեղծում են դրական մոտիվացիան, կարևոր է բարենպաստ հոգեբանական կլիման սովորողների նկատմամբ լինել բարի, հոգատար, հասկացող, ապրումակցող, խրախուսող, գովաբանող, չկոտրել սովորողի « ես »- ը: Ուսուցման դրական դրդապատճառների զարգացումը նպաստում է դասարանում և դպրոցում ընդհանուր ջերմ մթնոլորտին, բացի այդ մոտիվացիայի ձևավորումը նպաստում է զվարճալի ներկայացումների, զվարճալի օրինակների, փորձերի, պարադքսալ փաստերի, սովորողների շրջանում զարմանք առաջացնող նյութի դասավանդման անսովոր ձևին, ուսուցչի խոսքի հուզականությանը, բանավեճին, քննարկման իրավիճակների, ճանաչողական խաղերի, կյանքի անձնական նշանակության պարզաբանմանը և հետագա կյանքում դպրոցական գիտելիքների օգտագործմանը: Ուսուցչի խրախուսանքի և պարսավանքի հմուտ օգտագործումը մոտիվացիայի ձևավորման գործում որոշիչ դեր ունի: Առանձնահատուկ նշանակություն ունի սովորողի սովորելու ունակության, հմտության բոլոր ասպեկտների ամրապնդումը, ապահովելով բոլոր տեսակի գիտելիքների յուրացումը և դրանց կիրառումը նոր պայմաններում:

Սովորողների կողմից ուսումնական առաջադրանքների ինքնուրույն կատարումը և ինքնատիրապետումը, ինքնուրույն անցումը ուսումնական աշխատանքի մեկ փուլից մյուսը, սովորողների ընդգրկումը համատեղ, խմբային, կրթական գործունեության մեջ: Ուսման նկատմամբ մոտիվացիայի բարձր մակարդակը անհրաժեշտ է ուսման մեջ հաջողության հասնելու համար և դրանում մոտիվացիայի ներդրումը աշակերտի գործունեություն ընդհանուր հաջողության մեջ կարելի է համարել սովորողի ճանաչողական կարողությունների հետ միասին: Ուսման նկատմամբ մոտիվացիան կարող է նաև լավ ցուցանիշ լինել աովորողի մտավոր, բարեկեցության մակարդակի, ինչպես նաև նրա զարգացման մակարդակի ցուցանիշ դառնալու համար:

Հաճախ սովորողների ուսուցման դրդապատճառները կարող են լինել շատ պրոզայիկ՝ ծնողներից ցանկալի նվեր ստանալը, ծնողների և ուսուցիչների գովասանքին արժանանալու համար, գերազամցիկ դառնալու ցանկությոունը, ընկերների շրջանում առանձնանալը և այլն:

## Ավագ դպրոցի սովորողների ուսուցման մոտիվացիայի ուսումնասիրման մեթոդաբանություն

Ավագ դասարանի սովորողների ուսուցման մոտիվացիայի ուսումնասիրման մեթոդները ներառում են՝ փորձը, դիտարկումը, զրույցը, հարցումը, հարցաթերթիկը, գործունեության « արտադրանքի » վերլուծությունը:

Այս բոլոր մեթոդները բաժանված են 3 խմբի՝ անուղղակի, ուղղակի և պրոեկտիվ:Սրանք մեթոդներ են, որոնք իրականցվում են այս կամ այն ձևով, որպես առարկայի հարցում, վարքի և դրա առաջացման պատճառների գնահատում, փորձառարական մեթոդներ:

**Անուղղակի** մոտեցմամբ հետազոտության ընթացակարգը ուսուցչից պահանջում է, այնպիսի գործուղություններ, որոնց ախտորոշիչ ծրագիրը առարկայի համար մնում է չլուծված: Վերահսկվող պայմաններում թեստի անցկացում, որը կարող է լինել իրադարձությունները հիշելու ընտրողականությունը, տարբեր ոլորտներում անհավասար տեղեկացվածությունը, ինչ-որ բանի ձգտման ինտենսիվությունը: Դրդապատճառների ուսումնասիրության անուղղակի մոտեցման ընթացակարգերը երբեմն կոչվում են « օբյեկտիվ թեստեր »: Թեստերի այս տեսակը բավարար չափով չի մշակվել և անուղղակի մոտեցման ընթացակարգերը դեռ լայն կիրառություն չեն գտել:

**Ուղղակի** մոտեցումը հիմնված է դասավանդվող առարկաների սեփական մշակված հարցաշարերի վրա: Այս ընթացակարգը ունի էական թերություններ:

I- պատսխանները կարող են  աղավաղվել և միշտ չէ, որ գիտակցաբար, երբեմն հետազոտվողը գիտակցաբար կեղծում է պատասխանները:

II- պատասխանները պահանջում են ինքնագնահատում, ինչը դժվարությունների հատուկ տեսակ է ստեղծում: Ինքնագնահատականի դժվարությունը կարող է

վերացվել, եթե թեստը ճիշտ է կազմված և դրա հարցերը խորը ինքնավերլուծություն չեն պահանջում:

**Պրոեկտիվ** մեթոդը այն է, երբ հետազոտվողին առաջարկվում է բազմիմաստ նյութ: Այս մեթոդի թերությունը կարող է լինել հետազոտող ուսուցչի կողմից ստացված պատասխանների սուբյեկտիվ մեկնաբանությունը:

Բացի դրդապատճառներից, կարիքներից և նպատակներից հետաքրքրությունները, խնդիրները, ցանկություններն ու մտադրությունները դիտարկվում են նաև որպես մարդկային վարքի դրդապատճառներ: Հետաքրքրությունը կոչվում է ճանաչողական բնույթի հատուկ մոտիվացիոն վիճակ, որը, որպես կանոն, ուղղակիորեն կապված չէ որևէ կարիքի հետ, որը տվյալ պահին արդիական է: Ինքն իր նկատմամբ հետաքրքրություն կարող է առաջացնել ցանկացած անսպասելի իրադարձություն, որն ակամայից ուշադրություն է գրավել և հայտնվել սովորողի տեսադաշտում՝ որևէ նոր առարկա, իրադարձություն, ցանկացած մասնավոր, պատահաբար առաջացած լսողական կամ այլ գրգռիչ: Հետաքրքրությանը համապատասխանում է գործունեոիթյան հատուկ տեսակ, որը կոչվում է փորձարարական հետազոտություն:

## Փորձարարական հետազոտության նմուշ-հարցաշար

Ամսաթիվ՝
Աշակերտի անուն, ազգանուն՝
Դասարան՝

Սիրելի աշակերտ,

Ուշադիր կարդա՛ յուրաքանչյուր անավարդ նախադասություն և պատասխանների բոլոր տարբերակները: Ընդգծի՛ր պատասխանների 2 տարբերակ, որոնք համընկնում են քո սեփական կարծիքի հետ:

**1**. Դպրոցում սովորելն ու գիտելիքներն ինձ համար անհրաժեշտ են

**Ա**. հետագա կյանքի համար

**Բ**. համալսարան մուտք գործելու, կրթությունը շարունակելու համար
**Գ**. ինքնազարգացման, կատարելագործման համար
**Դ**. ապագա մասնագիտության համար
**Ե**. հասարակության մեջ իմ տեղը գտնելու համար
**Զ**. կարիերայի համար
**Է**. մեկնարկային որակավորում ստանալու և աշխատանքի տեղավորվելու համար:

**2**. Ես չէի սովորի, եթե ...
**Ա**. եթե դպրոցը չլիներ
**Բ**. դրա կարիքը չլիներ
**Գ**. համալսարան ընդունվելոու անհրաժեշտությունը չլիներ
**Դ** . չմտածեի, թե ինչ կլիներ հետո:

**3**. Ես սիրում են, երբ ինձ գովում են ...

**Ա**. գիտելիքներիս համար
**Բ**. ակադեմիական հաջողություններիս համար
**Գ**. լավ կատարված աշխատանքի համար
**Դ**. կարողություններիս և խելքիս համար
**Ե**. իմ աշխատասիրության և կատարողականության համար
**Զ**. բարձր գնահատականներիս համար:

**4**. Ինձ թվում է, որ իմ կյանքի նպատակն է ...

**Ա**. կրթություն ստանալ
**Բ**. ընտանիք կազմել
**Գ**. կարիերա ստեղծել
**Դ**. զարգանալ և կատարելագործվել
**Ե**. երջանիկ լինել

**Զ**. օգտակար լինել
**Է**. արժանի մասնակցություն ունենալ հասարակության կյանքում
**Ը**. դեռ որոշված չէ:

**5**. Իմ նպատակը դասաժամերին ...

**Ա**. տեղեկություն ստանալն է
**Բ**. գիտելիքներ ձեռք բերելն է
**Գ**. հնարավորինս շատ ուսումնական նյութ հասկանալն ու յուրացնելն է
**Դ**. ինձ համար անհրաժեշտ գիտելիքներն ընտրելն է
**Ե**. ուսուցչին ուշադրություն դարձնելն է
**Զ**. լավ գնահատական ստանալն է
**Է**. ընկերներիս հետ զրուցելն է:

**6**. Իմ աշխատանքը պլանավորելիս ես ...

**Ա**. մտածում եմ դրա մասին, խորանում իմաստի մեջ
**Բ**. նախ հանգստանում եմ
**Գ**. փորձում եմ ամեն ինչ ուշադիր կատարել
**Դ**. նախ կատարում եմ դրաա ամենադժվար մասը
**Ե**. փորձում եմ այն արագ կատարել:

**7**. Դասի մեջ ամենահետաքրքրիրն է ...

**Ա**. ինձ համար հետաքրքիր հարցի քննարկում
**Բ**. քիչ հայտնի փաստերը:
**Գ**. առաջադրանքների կատարումը
**Դ**. ուսուցչի հետաքրքիր խոսքը
**Ե**. բանավեճը
**Զ**. ստացած բարձր գնահատականը
**Է**. ընկերների հետ շփումը:

**8**. Ես ուսումնասիրում եմ նյութը բարեխղճորեն, եթե ...

**Ա**. այն ինձ շատ հետաքրքրիր է
**Բ**. այն ինձ պետք է
**Գ**. ինձ բարձր գնահատական է պետք
**Դ**. առանց որևէ պայմանի
**Ե**. ինձ ստիպում են
**Զ**. ես լավ տրամադրություն ունեմ:

**9**. Ես սիրում եմ կատարել իմ տնային աշխատանքները, երբ...

**Ա**. դրանք քիչ են և պարզ են
**Բ**. երբ ես գիտեմ, թե ինչպես անել դրանք
**Գ**. դա ինձ պետք կգա
**Դ**. դա ջանասիրություն է պահանջում
**Ե**. կատարում եմ այն հանգստանալուից հետո:

**10**. Ինձ ստիպում են ավելի լավ սովորել ...

**Ա**. ապագայի մասին մտքերը
**Բ**. մրցակցություն և վկայական ստանալու մասին մտքերը
**Գ**. պարտականության զգացումը
**Դ**. հեղինակավոր համալսարանում բարձրագույն կրթություն ստանալու ցանկությունը
**Ե**. պատասխանատվությունը
**Զ**. ծնողներս կամ ուսուցիչները:

**11**. Ես ավելի ակտիվ եմ դասարանում, եթե ...

**Ա**. ես ակնկալում եմ ուրիշների հավանությունը

**Բ**. ինձ հետաքրքրում է կատարված աշխատանքը
**Գ**. ինձ բարձր գնահատական է պետք
**Դ**. ուզում եմ ավելին իմանալ
**Ե**. ուզում եմ ուշադրություն դարձնեն ինձ վրա
**Զ**. ուսումնասիրվող նյութը հետագայում ինձ անհրաժեշտ կլինի:

**12**. Լավ գնահատականները արդյունք են ...

**Ա**. իմ քրտնաջան աշխատանքի
**Բ**. ուսուցչի աշխատանքի
**Գ**. թեմայի իմ պատրաստվածությանն ու ըմբռմանը
**Դ**. իմ բախտի
**Ե**. ուսման նկատմամբ իմ բարեխիղճ վերաբերմունքի
**Զ**. իմ տաղանդի կամ կարողությունների

**13**.Դասին առաջադրանքները կատարելիս իմ հաջողությունները կախված է

**Ա**.իմ տրամադրությունից
**Բ**.ուսումնական նյութի ըմբռնումից
**Գ**.բախտիցս
**Դ**.ակտիվ նախապատրաստվածությունից և ջանքերից
**Ե**.բարձր գնահատականներից
**Զ**.ուսուցչին ուշադիր լսելուց:

**14**. Ես ակտիվ կլինեմ դասերին, եթե ( քանի որ ) ...

**Ա**. լավ գիտեմ թեման և հասկանում եմ ուսումնական նյութը
**Բ**. կարողանամ հաղթահարել ուսուցչի առաջարկած առաջադրանքները
**Գ**. անհրաժեշտ եմ համարում դա անել
**Դ**. ինձ չեն նախատելու սխալի համար
**Ե**. հաստատ համոզված եմ իմ գիտելիքների մեջ

**Զ**. այդպես եմ ուզում:

**15**. Եթե ուսումնական նյութը ինձ համար հասկանալի չէ, ապա ես ...

**Ա**. ոչինչ չեմ ձեռնարկում
**Բ**. դիմում եմ ընկերներիս օգնությանը
**Գ**. համակերպվում եմ իրավիճակի հետ
**Դ**. ամեն գնով փորձում եմ հասկանալ
**Ե**. հուսով եմ, որ հետո կհասկանամ
**Զ**. հիշում եմ ուսուցչի բացատրությունը
**Է**. վերանայում եմ դասի ընթացքում արված գրառումները:

**16**. Առաջադրանք կատարելիս սխալ թույլ տալով, ես ...

**Ա**. ես այն կրկին կատարում եմ ուղղելով սխալները
**Բ**. ընկերներիցս օգնություն եմ խնդրում
**Գ**. նյարդայնանում եմ
**Դ**. շարունակում եմ մտածել դրա մասին
**Ե**. հրաժարվում եմ այն կատարել:

**17**.Եթե չգիտեմ, թե ինչպես կատարել առաջադրանքը, ապա ես ...

**Ա**. հրաժարվում եմ այն կատարել
**Բ**. ընկերներիցս օգնություն եմ խնդրում
**Գ**. մտածում և վիճում եմ
**Դ**. արտագրում եմ ընկերոջիցս
**Ե**. օգտվում եմ դասագրքից
**Զ**. նեղվում եմ:

**18**. Ես չեմ սիրում կատարել ուսումնական առաջադրանքներ, եթե դրանք ...

**Ա**. պահանջում են մեծ մտավոր լարվածություն
**Բ**. ջանք չեն պահանջում
**Գ**. տրամաբանական են
**Դ**. սրամիտ չեն
**Ե**. շատ են և բարդ
**Զ**. միապաղաղ են:

## Շնորհակալություն պատասխանների համար

Այսպիսի հարցաշարերը թույլ կտան ավելի լավ ճանաչել սովորողներին, նրանց հետաքրքրությունները, ուսուցիչը կկանոնակարգի իր աշխատանքը և այն ավելի արդյունավետ կդարձնի:

# ԳԼՈՒԽ 2:Ի՞ՆՉՊԵՍ ԵՄ ԵՍ ՄՈՏԻՎԱՑՆՈՒՄ ԻՄ ԴԱՍԱԺԱՄԵՐԻՆ

Ուսուցիչը միշտ իր կամքից անկախ ձգտում է ընտրել ամենահարմար ուսուցման ձևը: Ինչքանով այդ հնարը հարմար է ուսուցչին, դրանով այն հարմար չէ աշակերտներին: Դասավանդման միայն այն հնարն է ճիշտ, որից գոհ են աշակերտները:

**Լ.ՏՈԼՍՏՈՅ**

Աշակերտը կուժ չէ, որ լցնես գիտելիքով, այլ ջահ՝ որը պետք է վառես:

**Կ.Դ.ՈՒՇԻՆՍԿԻ**

Յուրաքանչյուր մարդու մեջ արև կա, միայն թե թողեք ՝ լուսավորի:

**ՍՈԿՐԱՏԵՍ**

Ուսուցիչը դասի նկարիչն է: Նա ձեռքը վերցնում է իր մեթոդական ներկապնակը և ստեղծագործում: Ստեղծագործելը ուսուցչի գործունեության հենքն է: Որովհետև երիտասարդները չեն հանդուրժում լճացում: Ուսուցչի խնդիրն է հետաքրքրել, թև տալ գիտելիքներով, ներգրավել, հմայել իր դասավանդած առարկայով, կպնել աշակերտի հոգու « կենդանի » լարերին:

Պատմությունը միշտ ունի մարդկային դեմք: Բոլոր շրջադասային իրադարձությունների հետևում կանգնած են կոնկրետ մարդիկ իրենց՝ կյանքի նկատմամբ հետաքրքրություններով, ուրախություններով և կորուստներով, թռիչքներով և ձախողումներով: Յուրաքանչյուր պատմական ակնթարթը տողան է՝ բազմամարդ մասնակիցներով, որն ընդգրկում է հաղթողներին և հաղթվածներին, երջանիկներին և դժբախտներին, իրենց հաջողությունով հարբածներին և հույսը կտրածներին: Պատմության դասաժամերին առանձնահատուկ նշանակություն ունի կրթական գործընթացի կրթական, դաստիարակչական կողմերը: Իմ դասերին ես փորձում եմ այնպես անել, որ անցյալի իրադարձությունների տպավորությունները մտնեն սովորողի հոգևոր աշխարհ, ապրումակցեն: Աշակերտները սովորում են հարգել նախորդ սերունդների նվաճումը, հաղթահարել անտարբերությունը, անմիասնականությունը, անջատողականությունը ուսումնասիրված խնդրի

նկատմամբ և սա դասի կրթական բաղադրիչների հաջողության զգալի գրավականն է:

Պատմության դասերը չեն կարող լինել առանց արժեհամակարգի ձևավորման: Պատմության յուրաքանչյուր դասաժամ պետք է լինի հայրենասիրության դաստիարակության դասաժամ: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո առաջացավ գաղափարական վակում: Ժամանակակից սերունդը, ինչպես ցանկացած այլ, գաղափարախոսության կարիք ունի: Այդ բացը լրացրին Հայաստանի Հանրապետության անկախացումը, արցախյան գոյամարտը, 44 օրյա պատերազմը և 2022թ.-ի սեպտեմբերյան դեպքերը: Այսօր, երբ մեր ազգի գլխին կրկին սև ամպեր են կուտակվել, երբ թշնամին նորից փորձում է կործանել Հայաստանը, երբ հազարավորների արյան գնով ազատագրված Արցախն ենք կորցնում, օդ ու ջրի պես մեզ անհրաժեշտ է դաստիարակել հայրենասեր, հայրենատեր սերունդ: Պատմության դասաաժամերն այդ գործում լավագույն օգնականն են: Պատմական դեմքերի գործունեության օրինակը ցույց է տալիս իրական հայրենասիրությունը (Հայրենական Մեծ պատերազմի հերոսների, Արցախի համար զոհված տղաների, սփյուռքահայերի օրինակները) և քաղաքացիական պատասխանատվությունը երկրի և ժողովրդի ճակատագրի համար : Հետևաբար իմ դասերին պատմական նյութեր ընտրելիս անհրաժեշտ եմ համարում ուշադրություն դարձնել անհատի դերին: Պատմության դասերին շատ կարևոր դեր է խաղում մեր երկրի մշակութային առանձնահատկությունների ընկալումը: Ձևավորել պատմական հանդուրժողականություն այլ ժողովուրդների մշակույթի, կրոնի նկատմամբ, այլ ժողովուրդների ազգային ավանդույթները ուսումնասիրել, մեկ այլ ժողովրդի աշխարհայացքը հասկանալու փորձը դառնում է պատմական ճակատագիր և սեթական հայրենիքին, ժողովորդին հասկանալու բանալին, հայրենասիրության և հայրենիքի հանդեպ սիրո զգացողության ձևավորման բանալին : Աշակերտների մոտ հայրենասիրության ձևավորումն ու արտահայտումը կախված չեն նրա ստացած գնահատականներից, առաջադիմությունից: Սովորողի մոտ հայրենասիրության զգացումը կարող է արթնանալ պատմական կոնկրետ իրավիճակից ելնելով: 2020թ.-ի սեպտեմբերի 27-ից սկսված պատերազմը 180 աստիճանով փոխեց բոլորի կյանքը, մտածելակերպը, աշխարհայացքը, արժեհամակարգը: Ամենակարևորն ու

առաջնայինը դարձավ խաղաղությունը: Պատերազմի սկսվելուց անմիջապես հետո բոլորով հասկացան, որ մեր բանակի համար ուժեղ թիկունքը կարևոր է: Սկսվեցին աշխատանքներ տարվել այդ ուղղությամբ: Համայնքի բնակիչների, կամավորականների հետ միասին աշակերտները սկսեցին հավաքել սնունդ, ջուր, մաշված անվադողեր՝ դիրքեր հասցնելու համար: Արագ կազմակերպվեց համայնք և մեր դպրոց եկած արցախցիներին օգնություն կազմակերպելու գործընթացը: Մեծահասակների հետ միասին աշակերտները գտնում էին ազատ բնակարաններ, հագուստ, սնունդ հայթայթում նրանց համար: Ամեն ինչ արվեց արցախահայերին օգնելու համար: Երբ լուր ստացվեց, որ բանակին խիստ անհրաժեշտ են քողարկիչ ցանցեր, արագորեն փորձեցի կազմակերպել քողարկիչ ցանցեր գործել: Առանց պարտադրանքի, ինքնակազմակերպվեցին, ոգևորվեցին աշակերտները և սկսեցին ինձ հետ միասին ցանցեր գերծել: Կատարվեց աշխատանքի բաժանում: Աշակերտների մի մասը համայնքի բնակիչներից հավաքում էին հնամաշ հագուստ, մի մասը՝ պատրաստում կառկասը՝ ցանցը հավաքելու համար, մյուսները մշակում էին ձեռք բերված հագուստը, իսկ մնացածը՝ գործում: Փորձ չունեինք: Սովորեցինք համացանցից: Մինչև գիշերվա 23:00-ն աշակերտները դպրոցում գործում էին այդ ցանցերը, դասերը սովորում էին կեսգիշերին: 7-երորդ դասարանի աշակերտներից Թ.Խ.-ն, որը դպրոցում աչքի է ընկնում իր հիպերակտիվ և անկառավարելի վարքով, ցերեկները ընկերների հետ հնամաշ անվադողեր էր հավաքում, երեկոյան գալիս էր դպրոց՝ քողարկիչ ցանցեր գործելու: Աշխատանքը բարդ էր նրանով, որ մեր մոտ ավանդական հասարակություն է և աղջիկը չի կարող այդ ժամին տանից բացակայել: Իհարկե՞, ծնողները ևս հասկացան, որ պետք է օգնել մեր բանակին: Աշխատանքները շարունակվեցին նաև 2022թ.-ի սեպտեմբերի 13-ին սկսված ռազմական գործողություններից հետո: Գործեցինք 80 քողարկիչ ցանցեր, որոնք հասցվեցին մեր դիրքեր՝ Ջերմուկ և Սոթք:

Պատերազմը պատճառ դարձավ, որ այդ սովորողները գործով ապացուցեն իրենց հայրենասիրությունը: Մեր դպրոցի լավագույն աշակերտներից 3-ի զոհվելը շատ ընկճեց նրանց, բայց աշխատանքները չդադարեցրին:

Պատմությունը հնարավորություն է տալիս ցույց տալ, թե ինչպես կարող ենք զարգացնել հպարտության զգացում մեր երկրի համար՝ կյանքի տարբեր

ոլորտներում, երկրի փոքր և մեծ հաղթանակների նկատմամբ հատուկ վերաբերմունքի օրինակով (սպորտի, մշակույթի, տնտեսության, կրթության բնագավառներում): Օրինակ այս տարի մեր երկրի ներկայացուցիչները մեծ ձեռքբերումներ ունեցան սպորտում:

Քաղաքացիական իրավունքի կրթության թեմաներին նվիրված դասընթացներին աշակերտները պետք է ոչ միայն սովորեն սոցիալական և իրավական հասկացությունների մի շարք, այլև գլխավորն այն է, որ գիտակցեն ակտիվ քաղաքացիական դիրքորոշման անհրաժեշտությունը, որպեսզի այդ հասկացությունները չմնան ուրիշի կյանքի կամ գրքի գեղեցիկ նկարազարդում:

Ժամանակակից դասը պահանջում է ՏՀՏ-օի կիրառում: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ դասերը նպաստում են սովորողների ավելի ակտիվ գործունեությանը, օգնում են նրանց ավեելի պայծառ, հուզական ընկալել պատմական իրադարձությունները, արդարացնել և պաշտպանել իրենց տեսակետը, ինչպես նաև ընդլայնել տեղեկատվական դաշտը: Տեղեկատվական ռեսուրսների օգտագործումը նպաստում է նոր տիպի մտածելակերպ ունեցող, նախաձեռնող, ստեղծագործ համարձակ որոշումների կայացման, տեղեկատվական ոլորտում կեմպետենտ մարդկանց ձևավորմանը: Պատմության և հասարակագիտության դասերին օգտագործում եմ հետևյալ ծրագրեը՝ Microsoft Word, Microsoft Excell, Microsoft Power Point: Բացի այդ, որպես տնային աշխատանք սովորողները իրենք են ստեղծում շնորհանդեսներ, որոնում տեսաֆիլմեր, պատրաստում զեկույցներ, գրում փոքրիկ շարադրություններ՝ օգտագոործելով ինտերնետային ռեսուրսները: Հատկապես արդյունավետ են այն դասերը, որոնց վերաբերյալ կան տեսանյութեր: Օրինակ 9-րդ դասարանի «Հայոց պատմության» դասագրքում որոշ էջերի վրա կար QR կոդեր, սովորողները հեռախոսի օգնությամբ դասին վերաբերող լրացուցիչ նյութեր էին դիտում և լսում: Դասը դառնում էր հետաքրքրիր և արդյունավետ: Սկզբից նրանց համար դա շատ զվարճալի էր: Երբ սովորողները դտում են տեսանյութը, ես առաջարկում եմ ուշադիր լսել նյութը և պատասխանել հարցերին.

- Ինչի՞ մասին էր:
- Ի՞նչ կապ կա մեր դասի հետ:
- Արտահայտե՞ք ձեր կարծիքը տեսանյութի վերաբերյալ:

- Օգնե՞ց դասն ավելի լավ հասկանալուն:
  և այլն:

ՏՀՏ-ով դասի հաջողված օրինակ է հանդիսանում « Աշխարհացույց » գործիքով՝ էլեկտրոնային գրատախտակի կիրառմամբ դասերի կազմակերպումը, որը շատ մեծ հետաքրքրություն է առաջացրել աշակերտների շրջանում: Այս գործիքի կիրառումը դասերին և նախագծային աշխատանքների ժամանակ ապահովում է բարձր արդյունավետություն, որի փորձը մենք արդեն ունենք:

Նոր նյութ ուսումնասիրելիս գիտելիքների համախմբումն ու ընդհանրացումը հատուկ ուշադրության է դարձվում անկախ աշխատանքի ձևերի բազմազանությունից: Այդ աշխատանքներն են բանավոր և գրավոր աշխատանքները, աղյուսակների լրացումը, թեստային աշխատանքների կատարումը, տրամաբանակնա շղթաների կազմումը, գծագրերի և գծապատկերների հետ աշխատելը, ուսումնական նյութի ամփոփումը, օժանդակ սխեմաների կազմումը, խաչբառերի, հանելուկների լուծումը և այլն, որոնք նախատեսված են ինչպես ուսումնական նյութի պարզ վերարտադրման համար, այնպես ստեղծագործական գործունեության համար: Այսպիսով, օրինակ թեման կրկնելիս կամ համագործակցային աշխատանքի ժամանակ ես առաջարկում եմ ոչ միայն լուծել խաչբառերը, այլ նաև դրանք ինքնուրույն կազմել: Դասարանում աշակերտները լուծում են պատմական խնդիրներ, գուշակում հանելուկները, հանձնարարաում եմ նաև ,որպես տնային աշխատանք ինքնուրույն հորինել պատմական հանելուկներ:

Նոր նյութ ուսումնասիրելիս ես սովորեցնում եմ աշակերտներին կազմել օժանդակ ամփոփագրեր, որոնցում տեղեկատվությունը ներկայացվում է հակիրճ և պարզ: Այս գործողությունը ակտիվացնում է մտավոր գործունեությունը՝ նպաստելով ուսումնասիրվող նյութի ըմբռմանը և ավելի լավ մտապահմանը՝ ակամայից կապելով տեսողական հիշողության հետ: Ես զարգացնում եմ փաստերը, իրադարձությունները, գործընթացները, երևույթները, անհատականությունները դասակարգելու, ընդհանրացնելու և համակարգելու ունակությունը ՝ կազմելով ժամանակագրական և համեմատական աղյուսակներ: Սիրում եմ դասերիս ժամանակ ստեղծել խնդրահարույց իրավիճակ, որպեսզի աշակերտները սկսեն

բանավիճել և խնդրի լուծման իրենց տարբերակներն առաջարկեն: Այս ձևերի օգտագործումը թույլ է տալիս զարգացնել մտավոր գործունեությունը, խոսքի մշակույթը, հաղորդակցման ունակությունները, քննադատական մտածողությունը: Նոր նյութ ուսումնասիրելիս կիրառում եմ համագործակցային դասի մեթոդը: Ուսուցման խմբային մեթոդի մեթոդաբանությունը զարգացնում է գործարար և սոցիալական հաղորդակցման հմտությունները, մեծանում է նյութի յուրացման արդյունավետությունը: Խմբում արժևորվում է յուրաքանչյուրի կարծիքը: Մի խմբում ես ընդգրկում եմ տարբեր ունակություններով աշակերտների: Համագործակցային խմբերում ավելի հեշտ են յուրացնում դասանյութը, ինքնակազմակերպվում են, սովորում են ավելի արդյունավետ օգտագործել ժամանակը, միմյանց նկատմամբ դառնում են ավելի հանդուրժող, բարյացակամ, հաշվի է առնվում յուրաքանչյուրի կարծիքը, հանձնարարությունները տրվում են տարբերակված՝ յուրաքանչյուրին իր կարողուղությունների չափով: Թույլ սովորող աշակերտը ձգտում է պիտանի լինել խմբին: Նրա մոտ ձևավորվում է պատասխանատվության զգացում: Այսպիսի աշխատանքների ժամանակ ես օգտագործում եմ «Աշխատանք կենտրոններով», «4 անկյուն», «Կառուսել» մեթոդները:

Պատմության դասն անհնար է պատկերացնել առանց փասթաթղթերի, պատմական սկզբնաղբյուրների, նշանավոր պատմիչների, ստեղծագործությունների:Որպես տնային աշխատանք հաճախ հանձնարարում եմ սեմինար-դասեր, գործնական աշխատանքներ, որոնք հիմնված են պատմական փասթաթղթերի ուսումնասիրության, պատմիչների վկայության վրա: Փասթաթղթերի, պատմական վկայությունների, սկզբնաղբյուրների օգտագործումը դասը դարնում է ավելի հետաքրքիր, հագեցած, տեղեկատվական: Օրինակ՝ հանձնարարում եմ դուրս գրել հայոց պատմիչների վկայությունը Պապ թագավորի մասին և հռոմեացի պատմիչների վկայությունը Պապի մասին: Համեմատում ենք, վերլուծում, անում հետևություններ:

Պատմության յուրաքանչյուր նդասի ժամանակ պարտադիր տարր է աշխատանքը դասանյութի հետ:

Դասագրքի տեքստը ներառյալ տեղեկատվության ներկայացման տարբեր եղանակներ (հիմնական և լրացուցիչ տեքստերը, հանրագիտային նյութերը,

աղյուսակները, գծապատկերները, քարտեզները, նկարները, փոքրիկ շարադրությունները, էսսեները) աշակերտի մոտ զարգացնում է տեքստի հետ աշխատելու մշակույթ, և դա նպաստում է նրանց մոտ ձևավորել

- Տեղեկատվություն փնտրելու ունակություն(տեղեկատվության տարբեր աղբյուրներ, ներառյալ լրատվամիջոցները և ինտերնետային ռեսուրսները)
- Տեղեկատվության ընկալման ունակություն
- Տեղեկատվության իրազեկման ունակություն (տեքստի հիմնական և լրացուցիչ, բացահայտ և թաքնված՝ ենթաատեքստային տեղեկատվության ըմբռնում)
- Տեղեկատվության մշակման ունակություն (վերլուծության, համեմատության, սինթեզի, տրամաբանական գործողությունների վրա հիմնված հմտություն)
- Տեղեկատվություն փոխանցելու և օգտագործելու ունակություն (տեղեկատվության ներկայացում մանրամասն ըստ վկայությունների, ամփոփագրերի, ծանոթագրությունների, զեկույցների):

Պատմության դասաժամերին օգտագործվում են ընթերցանության բոլոր տեսակները (բացատրական, մեկնաբանված, ընտրովի, ինքնուրույն ):Օրինակ՝ հանձնարարում եմ թույլ սովորող աշակերտներին գտնել որևէ կարևոր իրադարձության նկարագրություն և բարձրաձայն ընթերցել:Դասը բաժանել մասերի, դասի հիմնական մասը առանձնացնել, ընտրել փաստեր, եզրակացություններ անել, աշխատանքներ նկարների,տեքստերի, փասթաթղթերի բովանդակության վերլուծություն, աշխատանք եզրույթների հետ, դասն առանձին մասերի բաժանել՝ վերնագրել, հարցաշարեր կազմել, խաչբառեր կազմել, կազմակերպել վիկտորինաներ, «վերակենդանացնել» պատմական նկարը, ստեղծել պատմական միջավայր: Ահա այն աշխատանքները, որոնք տարվում են պատմության դասաժամերին:

Ամփոփման դասերի ժամանակ ակտիվորեն կիրառում եմ «Կառուսել», «Խառնաշփոթ», «Օդապարիկ», «Գտիր ճիշտ թվականը», «Եզրույթների զամբյուղ» մեթոդները: Գրատախտակին գրում եմ հասկացություններ , եզրույթների

բացատրություններ, բաց թողնված բառեր, և սովորողը գտնում է «ավելորդ» հասկացությունը: Պատմության դասագրքերում շատ հանդիպող այս կամ այն վկայության, սկզբնաղբյուրի, ասույթի վերլուծություն ենք կատարում: Աշակերտների մոտ տեսողական հիշողությունը զարգացնելու համար օգտագործում եմ լուսանկարներ, գրաֆիկական պատկերներ ( Т- աձև աղյուսակ, М-աձև աղյուսակ, վենիդիագրամ), ծաղրանկար ենք փորձում ստեղծել, դասի խորհրդանիշը՝ «Կմախք» մեթոդը օգտագործելով:

Որևէ իրադարձության պատճառահետևանքային կապը ներկայացնելիս շատ լավ է աշխատում «Ձկան կմախք» մեթոդը, որը կիրառում եմ 5,6,7-րդ դասարաններում:




Շատ արդյունավետ են, և աշակերտները շատ են սիրում դպրոցից դուրս դասերը: Իմ մեթոդական ներկապնակում մեծ տեղ եմ տալիս թանգարանային դասերին, հայրենաճանաչողական էքսկուրսիաներին: Երբ ուսումնասիրում ենք «Վանի թագավորություն թեման» կամ «Արտաշես Ի-ի հողային բարեփոխումները», կազմակերպում են շրջայց Գավառի երկրագիտական թանգարան: Թանգարանը բավականին հետաքրքիր ու հարուստ նմուշներ կան: Քանի որ Վանի թագավոր Ռուսա Ի-ի գահակալման շրջանում Գավառ քաղաքի տեղում նա հիմնադրել է Խալդի քաղաքը, և ի վկայություն կա Ռուսա Ի-ի կողմից թողնված սեպագիր արձանագրություն, որը պահպանվում է մեր թանգարանում: Աշակերտները տեսնում են մեր քաղաքի ծննդյան վկայականը՝ սեպագիր արձանագրությունը, Արտաշես Ի-ի կողմից թողնված սահմանաքարը, ծանոթանում են մեր տարածաշրջանում պեղումների ժամանակ հայտնաբերված նյութերին:Թանգարանային դասերը նպաստում են աշակերտների մոտ արժեհամակարգի ձևավորմանը: Նրանք հպարտություն են զգում նախորդ

սերունդների ստեղծած մշակութային հարստությունով: Դասի ժամանակ, եր զգում եմ՝ աշակերտները հոգնել են, անուշադիր են առաջադրում եմ պատմական խնդիր կամ հանելուկ: Օրինակ՝

- Գուշակե՞ք՝ միջնադարում նոր կառուցած կամրջի ամրությունը ինչպես էին ստուգում:

Կամ.

- Ի՞նչու էին միջնադարյան Հայաստանում եկեղեցիների գմբեթների շինարարության մեջ օգտագործում կավե կարասներ:

Հանելուկները, պատմական խնդիրները կարելի է օգտագործել նաև դասի սկզբում, որպես խայծ: Որպես խայծ կարելի է օգտագործել նաև տեսանյութ, նկար կամ հուշող հարցերի միջոցով գուշակեն պատմական հերոսին: Շատ է մոտիվացնում, երբ դասարան ես բերում որևէ պատմական դիտակտիկ նյութ: Օրինակ ՝ 6-րդ դասարանում համաշխարհային պատմությունից «Եգիպտոս» թեման ուսումնասիրելիս դասարան եմ տանում եգիպտական մագաղաթ: Սովորողները ուսումնասիրում են մագաղաթի վրայի նկարները, եգիպտական հիերոգլիֆները, նրանց շատ է հետաքրքրում բույսը, որի տերևներից պատրաստված է մագաղաթը, փորձում են պատմել նկարի բովանդակությունը: Արդյունավետ է նաև նկարի «ապակոդավորում» մեթոդը, երբ ցույց ես տալիս անծանոթ նկար, բայց դասի հետ կապված է, և սովոևողները սկսում են հետազոտել, հետո վարկածներ առաջադրել: Իրադարձությունների ժամանակագրությունը լավ մտապահելու համար ստեղծում ենք «Ժամանակաշրջանի ժապավեն»: Սովորողները շատ են սիրում «վերակենդանացնել» պատմական նկարը, բեմականացնել պատմական այս կամ այն իրադարձությունը, նամակ գրել այս կամ այն հերոսի անունից, նկարել սիրելի պատմական հերոսին: Շատ ակտիվ են թուլ աշակերտները «+1», «Հաստ և բարակ հարցեր», «Մտքերի տարափ» մեթոդները կրառելիս: Աշակերտները սիրում են նաև քարտային աշխատանքները, պատմական «լոտո» ճանաչողական խաղը: Քարտերի վրա նշանավոր հայորդիների նկարներ են, իսկ աշակերտները պեըտք է գտնեն նրանց անուն ազգանունները: Դասը կանցնի հետաէքրքրիր, մոտիվացված, եթե դասանյութի խնդիրը առանձնացվի, սովորողները առաջ քաշեն լուծման իրենց վարկածները: Սա ևս մեթոդ է: Հանձնարարել աշակերտներին

տանից բերել շատ հին նկարներ, օրինակ Հայրենական Մեծ պատերազմին մասնակցած իրենց ծնողների պապիկների նկարները, կամ Արցախյան պատերազմում զոհված իրենց հարազատի նկարը և պատմել, ներկայացնել: Եթե շատ նկարներ բերեն, կարելի է «հուշերի ալբոմ» պատրաստել: Հետաքրքրիր է, երբ պատմական իրադարձության կամ հերոսի նկարը բաժանում ես մասերի և հանձնարարում ես սովորողներին «հավաքել» այդ փազլը: Սա ևս կմոտիվացնի:

Աշակերտը դպրոցը ավարտելով հետագայում հիշում է ուսուցչին, ոչ թե մեթոդները: Ուստի պատմություն դասավանդող ուսուցիչը կհասնի դասին հաջողության, եթե սիրի իր աշխատանքը, երեխաներին, չլճանա, ձգտի ինքնակրթության, աշակերտին հասկանա, ըմնկերանա նրա հետ, վերևից չնայի, գնահատականով չվախեցնի, նվիրված լինի իր աշխատանքին, տիրապետի իր առարկային, դասարան մտնի ժպիտով և լավ տրամադրությամբ:

Ես մշտապես զբաղվում եմ ինքնակրթությամբ, մասնակցում եմ բազմաթիվ սեմինարների, հանդես եմ գալիս առարկայական ռեֆերատներով: Պարտադիր կազմակերպում եմ հայրենասիրական միջոցառումներ (Նժդեհին, Անդրանիկին, Գ. Զոհրապին, Վահե Հայկին,Եղեռնին):44-օրյա պատերազմին նվիրված միջոցառման համար արժանացել եմ գովասանքի և դրամական պարգևատրման: Այս ուս. տարում կազմակերպելու եմ միջոցառում նվիրված սփյոռքահայ մեր հերոսներին ՝ Մոնթեին և Կարո Քահքեջյանին:

Պատմաբանի օրվան նվիրված իմ և 11-րդ դասարանի աշակերտների կողմից կատարված նախագծային աշխատանքը արժանացավ հավաստագրի: Այս ուս. տարում ևս նախատեսել եմ կազմակերպել նախագծային աշխատանքներ:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր ուսուցչի առջև կանգնում է իր առարկայի ուսումնական դասընթացի նյութերով արժեքների համակարգի ձևավորման, սովորողների անձի դաստիարակության խիստ բարդ խնդիրը: Որպեսզի յուրաքանչյուր ուսումնական առարկա յուրաքանչյուր սովորողի համար անձնային նշանակություն ստանա, անհրաժեշտ է, որ դասի ընթացքում ստեղծվիւ ստեղծագործական համագործակցության մթնոլորտ, խրախուսվի իմացական ցանկացած գործընթաց,խրախուսվի յուրաքանչյուր նախաձեռնություն, յուրաքանչյուր իմացական փորձ: Համաշխարհայնացման պայմաններում մենք անպայման պետք է հաշվի առնենք եվրոպական առանցքային կոմպետենցիաները՝ բայց միշտ հիշելով, որ չի կարելի ստեղծել «ամորֆ մարդ, գործարանային արդյունք»,այլ՝ հայ մարդ, հայ քաղաքացի, որն ապրում եմ 21-րդ դարում: Կրթական տիեզերական դաշտի մեջ մենք պետք է կարողանանք մեր տեսակետը հաստատել:

Վերլուծելով իմ աշխատանքը՝ ես կարող եմ եզրակացնել, որ դասավանդման ակտիվ ձևերի և մեթոդների օգտագործումը դասարանում զարգացող ուսուցման իրականացման համատեքստում նպաստում է ուսման մոտիվացիայի բարձրացմանը, առարկայի նկատմամբ հետաքրքրության առաջացմանը, բարենպաստ միկրոկլիմայի ստեղծմանը, անհատի ինքնազարգացմանը, աշակերտների սոցիալական փորձի ձևավորմանը՝ ընդհանուև ընդունված սոցիալական նորմին համապատասխան, ակտիվացնում է ճանաչողական գործունեությունը և օգնում է բարելավել գիտելիքների որակը: Ուստի, լավ ուսուցիչը պետք է՝

- Լինի այն ուսուցիչը, որին երազում էր ինքն ունենալ, երբ աշակերտ էր

- Սիրի երեխաներին
- Տիրապետի մանկավարժական կրթության հմտություններին
- Պատկերացում ունենա տարբեր տարիքի երեխաների հոգեբանության առանձնահատկություններից
- Կարողանա ներքին կապ ստեղծել իր և ընդհանուր աշակերտական խմբի, խմբից զատ՝ որպես անհատների հետ
- Լինի հոգատար և հարգի իր աշակերտի անհատականությունը
- Իմանա իր առարկան և անկաշկանդ նավարկի իր ընտրած գտելիքների ոլորտում
- Լինի օբյեկտիվ և արդարացի որոշումներ կայացնի
- Անդադար կատարելագործվի և քայլի ժամանակին համընթաց՝ հաշվի առնելով գիտության և տեխնոլոգիաների անընդմեջ զարգացումը:

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Բոժովիչ Լ. Ի. « Մոտիվացիայի ուսումնասիրություն, երեխաների և դեռահասների վարքագիծը»: Մոսկվա 1972 թ.:
2. Կովալև Վ. Ի. «Վարքի դրդապատճառները և գործունեությունը»: Մոսկվա 1988թ.:
3. Չիրկով Վ. Ի. « Ուսուցման մոտիվացիա»: Յարոսլավլ 1991 թ.:
4. Лукьянова М. И. «Методика изучения мотивации обучения у старшеклассников»
5. Конн И. С. «Психология старшеклассника. Пособие для учителей.2015г.»
6. Հանրակրթության առարկայական չափորոշչային վերջնարդյունքները և օրինակելի ծրագրերը: